

15. ԿՅՈՒԼԻՆ ՄՈՐԹԵՆ

Ինիս ա, չինիս, մին պառավ մարթ նան մին պառավ կնեզյ։ Տըհանց ինիս ա մին տղա։ Էտ տղատ մըծընաս ա, տոնաս քսան տրեկան։ Հարը, մարը մըսլըհաթ ըն ընես, վեր ուրանց տղեն փսակին։

Մին կընընչկյարմոնր ուռութանա մարը, հարը եր ըն կնաս, քյիս հըրեկանաց ըխճըկանը նշան, հանցու վեր մին տարանը հտը փսակին ուրանց տղեն նհետ։ Էտ տղատ քսանըմին տրեկանումը փըսըկես ըն էտ հըրըվանեն ըխճկանը նհետ, օխտը օր, օխտը քշեր հրսանեքյ ըն ընես։

Մին տարանը հտը էտ ախճիգյը մին տղա յա պիրիս, պատրոնը շատ ա ուրխուռնաս, հարթնենը հետե մին վրեսկե մեղալյոն ա ինքյ ունես։ Էրգան վախտ տղան նան հարթնը ըպրես ըն։ Մին օր էտ հարթնը ըրաղավ ա ընգնես, քաշկերը ընդրա յըրան մին կյոնլու մորթի յըն քցիս, հանցվեր էտ հարթնը կյոնլութուն անես։ Ամեն քշեր շոռ կյա, ուութանան կյա։

Էրգան վախտ կնա՛ս ըն, կնա՛ս, էտ հարթնը ամմեն քշեր կյոնլութուն ա ընես, ամմա հարթնանը սկեսուր նան պատրոնը գլիդան չըն։

Մին քշեր էտ պառավ կնեզյը եր ա կնաս, տսնաս հարթնը տեղումը չի, խոխան ուրուրոցումը լաց ա ինիս։ Սկեսուրը եր ա կնաս, տե՛ս հարթնը, տե՛ն հարթնը, ամմա ըրվաս չի։ Պատրոնը քյիս ա ծըմըկնեն շոռ կյաս, տըսնաս էն ա մին կյում ա շինած, հարթնը կյոնլու մորթեն շոռ կալած, մըռթմըռթալավ վըսկըռնե յա կըրծկործում, հունցը վեր ծմակեն կյոնլը։ Պատրոնը էնքան կնաս ա, վեր հարթնը

քոն ա ինիս, եր ա կնաս մորթեն կըլիւտական տուա ունես, պիրիս
քցիս թուրունը, իրիս: Հարթնը սկսես ա լաց ինիլը վեր մորթեն
քցալ ա թուրունը:

Տրանա հտը հարթնը վեշ մին կոնիւթուն չի ընես, խոլոնք
ա մնաս, էլ քշեր-ցիրեկ շոռ չի կլաս, ուրան խոխան լավ ա պըհես,
մըն էլ թափափան հրսանեքլ ըն ընես, վեր հարթնը խոլոնքացալ ա,
էլ ծըմըկնեն չի քլինիս: Տրանավ էլ քաթը պըրծընես ա:

